

Ա. Մուրադյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ՍՏԱԼԻՆՅԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Լեզվի մեջ զլխավորը նրա քերականական կառուցվածքն է և բառային հիմնական ֆոնդը,—ասում է ընկեր Ստալինը «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության մեջ, որը նոր դարաշրջանի բաց արեց լեզվաբանական գիտության մեջ և լեզվաբանությունն ազատագրեց, այսպես կոչված, «լեզվի նոր ուսմունքի» սխալներից ու մոլորումներից, մասյան սխալ, ոչ-մարքսիստական ֆորմալիզմներից, որոնց համաձայն լեզուն գիտվում էր որպես վերնաշենք ու դասակարգային։ Ընկեր Ստալինը իր լեզվի մասին այնպիսի ուղիղ, որով զարգանալու է սովետական լեզվաբանությունը։ Ստալինյան ուղիղ լեզվաբանության մեջ, ն. Յա. Մառի սխալներից հրաժարում, մարքսիզմի ներգրում լեզվաբանության մեջ, — այս է, իմ կարծիքով, այն ուղին, որով է ընկեր Ստալինը, — որով կարելի է իրենի առողջացնել սովետական լեզվաբանությունը։¹

Լեզվի մեջ քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը երկար դարերի պատմություն ունեն, արդյունք են մի շարք դարաշրջանների։ Այդ է պատճառը, որ լեզվի զարգացումը տեղի է ունեցել ոչ թե այնպես, ինչպես վերնաշենքի զարգացումը՝ գոյություն ունեցողի ոչնչացման և նորի կառուցման միջոցով, այլ գոյություն ունեցող լեզվի հիմնական տարրերի ծախսման ու կատարելագործման միջոցով։ Քննարկում, — գրում է ընկեր Ստալինը, — լեզվի մի որակից մի այլ որակի անցնելը տեղի է ունեցել ոչ թե պայթյունի միջոցով, ոչ թե նրա միանգամյա ոչնչացման և նորի կառուցման միջոցով, այլ լեզվի նոր որակի, նոր կառուցվածքի տարրերի աստիճանական ու տևական կուտակման միջոցով, հին որակի տարրերի աստիճանական մաքացման միջոցով։

Այսպիսով, արդի հայերենում էլ տեղի է ունեցել լեզվի նոր որակի, նոր կառուցվածքի տարրերի աստիճանական ու տևական կուտակում և հին որակի տարրերի աստիճանական մաքացում։ Այդ կարելի է տեսնել, օրինակ, հայերենի հոլովման և խոնարհման մեջ, հոլովիչների ու խոնարհիչների (կոնյուգիչների), նախադասության կառուցվածքի մեջ քերականական ձևերի և հասկացությունների զարգացման, հարստացման և կատարելագործման կապակցությամբ։ Այսպես, օր., արդի գրական հայերենից դուրս են ընկել հոլովական որոշ վերջավորություններ (բացառականի՝ -ի, գործիականի՝ -ալ, -իւ...) և զարգացել են նորերը (բացառականի՝ -ից, ներգոյականի՝ -ում..., իսկ գործիական հոլովի համար ընդհանուր է դարձել -ով հոլովանիշը և այլն), գոյական անունների հոլովումը հասել է գրե-

1 Ի. Վ. Ստալին. «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը». էջ 62:

2 Նույն տեղում, էջ 60-61:

թե միօրինակության՝ գերիշխելով ի հոլովումը (մանավանդ հոգնակիում)։ զարգացել են նոր քերականական եղանակներ ու եղանակաձևեր (ըզձական, ենթադրական, հարկադրական) և նոր քերականական ժամանակներ (վաղակատար, հարակատար, ապառնի և այլն) ու նոր ժամանակաձևեր ($\equiv$ բայաձևեր՝ ներկա, անկատար, ապառնի և այլն), բայերը խմբավորվում են երկու (-ել և -ալ) խոնարհումների տակ և նման այլ լեզվախոսողություններ։

Արդի գրական հայերենի հոլովման և խոնարհման գործոն (կենդանի) ձևերի կողքին կան նաև հին (մեռած) ձևեր, որոնք այսօր հանդես են գալիս ոչ թե քերականական, այլ միայն բառական արժեքով, բոլորովին այլ իմաստով ու դերով։ Դրանք հայոց լեզվի բառային կազմի հարստացման յուրահատուկ միջոցներ են, որոնք հանդես են գալիս որպես բառական արժեք ներկայացնող առանձին միավորներ՝ նրանց հոլովական և խոնարհման հին հասկացություններն արդեն մթագնած ու քարացած լինելով։ Դրանք են՝ ա) հին հոլովաձևեր և բ) խոնարհման ձևեր։

Իերենք սրանցից առանձին-առանձին օրինակներ.

ա) Հին հոլովաձևերից այսօր բառական արժեք ներկայացնող առանձին միավորներ են իհարկե բառաձևը, որ հարկ ժկարիք, ստիպմունք՝ բառի գրարարյան բացառական հոլովաձևն է (հին՝ ի հարկէ)՝ արդի հայերենում գործ է ածվում որպես մակրայ. որպես մակրայ է գործածվում նաև նույն հարկ բառի գրար. գործիական հոլովաձևը՝ հարկավ (հին՝ հարկաւ) իծնե և իսրտե մակրայները օիմ և սիրտ գոյականների գրար. բացառական հոլովաձևերն են (հին՝ ի ծնէ, ի սրտէ). իրավ մակրայը իր բառի գրար. գործիական հոլովաձևն է (հին՝ իրաւ), որից՝ իրավունք գոյականը, գրար. իրաւութիւն թիրամի՝ իրավացի լինելը, շ. իրավունք՝ գոյականը, գրար. իրաւութիւն թիրագործել, իրականացնել՝ բայաձևը, իրավամբ մակրայը (կրկնակի գործիական հոլովով) $\equiv$ բրբ. իրավով մակրայը (կրկն. գործ.) թիրամի, հիրամի, ճիշտ, հիրավի (հին՝ յ-իրաւի) մակրայը... խելք անեգ. բառից՝ խելոք ածականը (հին՝ խելօք < խելաւք՝ հոգն գործ. հոլ.), որից՝ խելոքանալ չեզոք բայը և խելոքություն գոյականը...

Գործիական հոլովով շատ ածականներ են կազմվում մեծ մասամբ խոսակցական լեզվում (նաև բարբառներում), օր.՝ համով ճհամեղ, քաղցր, որից՝ համովանալ ճհամեղ՝ քաղցր դառնալ՝ չեզոք բայը, համովություն ճհամեղություն, համով-հոտով ճհամեղ ու հոտավետ, ախորժիկ։ ուժով ճուժեղ՝ որից՝ ուժովանալ ճուժեղանալ՝ չեզոք բայը. փորով ճհղի. սիրով և սիրովնալ ճսիրով լինել մեկի հետ, սիրով մերարերվել մեկին։ կարնավ կամ կարճով ժկաթոտ, շ. կաթնապուր. հոտով ժլամ հոտով, ձայնով (բարբ. ձենով) ճուժեղ ձայն ունեցող, ձեռով-ոտով ճձեռքը-ոտքը տեղը, աշխատող, ժրաջան, նաև մակրայներ՝ շուտով, փութով ճշուտով, խկույն (հին՝ փոյթ բառի գործ. հոլ.)... և այլն։

բ) Հին խոնարհման ձևերից այսօր բառական արժեք ներկայացնող առանձին միավորներ են կեցցե բառը (բացադանչություն, գոյական), որ գրար. կեալ ճապրել՝ բայի ապառնի եզակի երրորդ դեմքն է (հին՝ կեցցէ). նույն կեալ բայից է՝ կեցցես (գրար. ապ. եզ. երկր. դեմք, բացադանչություն ճապրիս՝ նշանակությամբ). հասցե գոյականը գրար. հասանել ճհասունել՝ բայի ապառնի եզակի երրորդ դեմքն է (հին՝ հասցէ ճպետք է հաս-

նի, խոդ հասնիւ, որ հին ժամանակ նամակների վրա գրաբար գրում էին՝ հասցէ գիրս ի քաղաք... ի ձեռն... «այս գիրը հասնի... քաղաքը... ձեռքը»), որից՝ հասցեագրել, հասցեատեր, հասցեատուն, հասցեասեղան և այլն... Այսպես նաև՝ գուցե (գուլ բայի ստորգ. եզ. 3-րդ դ.), դիցուք կամ դիցուք բե (դնել բայի աս. հոգն. 1-ին դ.), համարյա կամ համարյա բե (համարել բայից), գրեք (գրեա բե զգրիւ թե՞ ձեռից) ... և այլն. բամբասանք (հին նաև՝ բամբաս) կազմված է բամ ժասում եմք + բաս ժասում ես՝ գրաբ. ներկա 1-ին և 2-րդ դեմքերի բայաձևերի միացումից (հմմտ. ասե-կոսե < ասե-կու-ասե ձեռից). գրաբ. իցէ ժլինի, եթէ լինի՝ եմ բայի գրաբ. ստորադ. ներկա եզ. երրորդ դեմքն է և այժմ գործ է ածվում մի քանի քարացած ոճերում՝ երբեիցե (կամ՝ երբեւէ) թերը էլ լինի, ինչեիցե (կամ՝ ինչեւէ) թինչ էլ լինի, որեիցե (կամ՝ որեւէ) թորն էլ լինի, ով էլ լինի (գործ է ածվում թե՛ անշուշտ և թե՛ շնչավորի համար)։

Լեզվական այս խրոդությունները, — որոնց թիվը քիչ չէ և վերևում միայն մի փոքրիկ մասը բերեցինք, — առաջ են դալիս պատմականորեն, հին որակի տարրերի աստիճանական մաճաղումով ու քարացումով, առանձին հոլովաձևերից, հոլովական կապակցություններից ու նույնիսկ առանձին նախադասություններից նոր բառական արժեքներ ստեղծվելով։ Այդ կատարվել է յուրաքանչյուր լեզվի, նաև հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերում, քանի որ լեզուն, ինչպես ընկեր Ստալինն է ասում, «...արդյունք է մի ամբողջ շարք դարաշրջանների, որոնց ընթացքում այն ձևավորվում է, հարստանում, զարգանում, հղկվում»¹։ Այդ ժամանակա-ընթացքում հայոց լեզվի բառային կազմի էլ, որպես առավել զգայունը փոփոխությունների մեջ, համարյա անընդհատ փոփոխվել է։ Նա փոխվում է ոչ թե հնի վերացման և նորի կերտման միջոցով, ինչպես վերնաշենքը, այլ գոյություն ունեցող բառարանը, ինչպես ընկեր Ստալինն է նշում, «փոփոխվում է սոցիալական կարգերի փոփոխությունների, արտադրության զարգացման, կուլտուրայի, գիտության և այլն զարգացման կապակցությամբ առաջացած նոր բառերով համալրելու միջոցով»²։ Այդ համալրումը կատարվում է, նախ և առաջ, լեզվի սեփական բառաստեղծական կամ բառակազմական (բառածանցման և բառարարման) միջոցներով, օր.՝ տնտես, տնտեսական, կոլտնտեսական, կոլտնտեսային, կոլտնտեսություն, հարվածային, ստախանովական, շինություն, շինարար, շինարարություն, նորարար, մեքենավար, կոմբայնավար, պարտիական, շքանշան, շքանշանակիր, դրոշակակիր, առաջավոր, սուզանավ, ջրասուզանավ, հաճանավ, հեծանիվ, ականակիր, ականանետ, ինքնաթիռ... 2) այլ լեզուներից բառերի յուրացումներով (= փոխառություններով), այժմ արդեն գերազանցապես ռուսերենից կամ ռուսերենի միջոցով, օր.՝ բոլշևիկ, սովետ, բրիգադիր, տրակտոր, տրակտորիստ, կոմբայն, օրգան, օրգանիզմ, տանկ, տանկիստ, պարտիա, կոմունա, կոմունիստ, կոմունիզմ, սոցիալիստ, սոցիալիզմ... և 3) ինչպես վերևում մի շարք օրինակներով տեսանք, այդ համալրումը կատարվում է նաև՝ ա) հին որակի տարրերի աստիճանական մաճաղումով ու քարացումով՝ առանձին հոլովաձևերից, կապակցություններից, բայա-

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», Հայպետհրատ, 1951, էջ 18։

² Նույն տեղում, էջ 55։

ձևերից և նույնիսկ նախադասություններից նոր բառական արժեքներ ստեղծվելով, օր., իհարկե, հարկավ, իծնե, իսրտե, խելոք, բարև, կեցցե, հասցե, գուցե, այսուհետև, որովհետև, բամբասանք, ինչևիցե (|| ինչևէ), որևիցե (|| որեւիէ)... և բ) զգալի թվով բառերի իմաստային փոփոխությամբ ու իմաստի զարգացմամբ. այսպես, օրինակ, աշխատանք բառը հին ճեղքություն, չարչարանք, խոնջանք, ճիգ՝ նշանակությունից անցել է գործ, զրադմունք, ծառայություն՝ նոր նշանակության, այստեղից էլ՝ աշխատել բայը հին ճեղքների, վաստակել, խոնջել, նեղություն կրել՝ իմաստից անցել է աշխատանք՝ գործ կատարել՝ նոր իմաստին. առարկություն բառը հին լուծելու առաջարկվող առակ՝ առեղծված՝ հանելուկ. 2. առաջարկություն, նախադասություն, խոսք՝ իմաստից անցել է ճշգրիտ մախոսություն, հակառակ կարծիքի արտահայտություն, նկատողություն, գիտողություն՝ նոր իմաստին, նույն և՛ առարկել բայը հին ժեկի առաջը ձգել, առաջարկել լուծելու խնդրի՝ հանելուկ՝ նշանակությունից անցել է հակառակ կարծիք հայտնել, դեմ խոսել՝ նոր նշանակության. ապրել բայը հին փրկել (վտանգից, մահից), ազատվել, պրծնել՝ իմաստից անցել է լեյանք ունենալ, կյանքը տևել, 2. կյանք վարել, կենցաղավարել, 3. բնակվել և այլն՝ նոր իմաստին. ազդել բայը հին լուր տալ, իմաց տալ, ազդարարել՝ իմաստից անցել է ճեղքգործել՝ նոր իմաստին. ընդգրկել բայը հին գրքել, գիրկն առնել, գրկախառնվել, փաթաթվել սիրով՝ իմաստից անցել է թր մեջ առնել, ամփոփել, պարունակել՝ նոր իմաստին. ծախել բայը հին ճոշնչացնել, կոտորել, սպանել՝ իմաստից անցել է վաճառել՝ նոր իմաստին. կարդալ բայը հին ճժայն արձակել, գոչել, աղաղակել. կանչել, ձայն տալ, կոչել, անվանել՝ նշանակությունից անցել է կարգալ՝ նոր նշանակության. դեգերել բայը հին ճմի տեղ մնալ՝ իմաստից անցել է նոր իմաստին և այլն:

Պետք է ասել, որ բառիմաստի փոփոխություններն ու զարգացումը լեզվի մեջ բավական լայն տարածում ունեն, և այդ երևույթը խիստ ակնհայտ է մանավանդ այնպիսի լեզուներում, որոնք հին գրավոր (երկար) պատմություն ունեն, ինչպիսին, օրինակ, մեր հայոց լեզուն է: Այդ է պատճառը, որ հայոց լեզվում բառիմաստի փոփոխություններն ու զարգացումը խիստ ակնհայտ են և դրսևորված են բազմապիսի ու ճիշտ ձևերով: Մրանք իրենց հերթին ուշագրավ են ու կարևոր հայոց լեզվի բառային կազմի ուսումնասիրելու տեսակետից:

Հայոց լեզվի բառային կազմի ուսումնասիրելու տեսակետից ուշագրավ են ու կարևոր նաև բառական այնպիսի միավորներ, որոնք երբեմն ձևի, երբեմն իմաստի, երբեմն էլ ձևի և իմաստի տեսակետից որոշ փոփոխություններ կրելով՝ առաջ են բերել մի շարք բառական արժեքներ (բառաձևեր) և որոշ չափով հարստացրել են հայոց լեզվի բառային կազմը: Դրանք հին նախդիրներով կազմված բառաձևեր են, որոնք այսօր մեծ մասամբ քարացած են և միայն առանձին բառական արժեք են ներկայացնում: Այդ նախդիրները հնում գործածվելով այլևայլ հոլովների հետ և տալով նրանց զանազան նշանակություններ ու առումներ (ուղղություն, հարաբերություն, վերագրում, իմաստի սաստկացում, իմաստի փոփոխություն և այլն)՝ այսօր այլևս մեծ մասամբ չեն գիտակցվում և հանդես չեն գալիս երբեմնի բառաստեղծական կամ բառակազմական գերով: Դրանցից

են, օր., գրար. հետևյալ նախդիրները առ, գ->ս-, ընդ>ըն-(>ըմ-), ըստ, ի>յ>ն, ց և այլն:

Վերջինից գրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին օրինակներով:

ա) Առ նախդիրով կազմված բառածևերն են՝ առագաստ (արմատը ազանել բայի), առաքուր (առ+աթուր ժրնդ աթուր, ոտքի տակ, ոտնատակ եղած), առայծմ (այծմ բառից), առանձին (անձն բառից), առանցք (անցք բառից), առաջ (աջ բառից), առարկա (առ և արկանել), առարկել ռնր. հին նշ. մեկի առաջը ձգել, առաջարկել լուծելու համար (խնդիր, հանելուկ), 2. հակառակ կարծիք հայտնել մեկի դեմ, առավել (առ+ավել), առաքել (առ+աք-ոտք, հմտ. բարբ. արել ռուդարկել), առերևույթ ժարտաքուստ թվացող, առնքներ ռ1. ած. մոտը՝ կողքին եղածը, մերձակա, 2. նախը. մոտը, կողքին, զույգ, կից. առկա ժոռոը՝ ներկա եղող, աչքի առաջ եղած, որից և՛ առկայել ժոռոը՝ ներկա լինել, աչքի առաջ լինել (հո. բացահայել), առկայություն ժառկա լինելը, մոտը՝ ներկա լինելը. առկայծել ժկայծի մոտենալ, մարելու մոտ լինել (ճրագի մասին). առհասարակ ժրնդհանրապես, ժմրողժապես. առծեռն ժձեռքի տակ եղած, պատրաստ, մատչելի. առնչություն (ընչ ժինչ բառից), առույլ (ողջ բառից), առօրյա, առոզանել || առոզել ժոզել, երգել, ասել, բառը արտասանել կանոնավոր կերպով՝ պահպանելով շեշտերը, որից և՛ առոզանություն ժրառը կանոնավոր կերպով արտասանելը՝ առոզանելը... և այլն:

բ) Զ (>ս) նախդիրով կազմված բառածևերն են (որ բառական շատ են), զառամել (ամ ժտարի բառից և զ+առ նախդիրներից) ժտարիքն առնել, շատ ծերանալ, որից՝ զառամյալ ժտարիքն անցկացրած, խիստ ծերացած. զառանցել (անցանել ժանցնել բայից և զ+առ նախդիրներից)՝ գրար. զառանցանել ժհին նշ. շափից անցնել զանցանել, զառամել, 2. կցկոտուր խոսել, բարբաջել, տաքությունից խոսել, որից՝ զառանցանք. նույն անց արմատից, զանցանք (զ+անցանք) ժօրինազանցություն ալը-ել ժվառել բայարմատից՝ զալըանալ (զ+ալըել) ժսաստիկ բարկանալ, սրտմտել, գըր-գըրվել, որից՝ զալըույթ. հատ-անել || հատ-ել ժկտրել բայարմատից՝ զատել (հին՝ զատանել <* զ+հատ-անել) ժանջատել, բաժանել, որից՝ զատ (զ+հատ) ժզատված, բաժան, ջոկ, անջատ, զատ-զատ (հին՝ զատ ի զատ, բրբ. զատնեզատ) ժջոկ-ջոկ, անջատ-անջատ. հին՝ հարկանել բայից՝ զարկանել (զ+հարկանել) >* զարկնել > զարկել || զարնել ժխր-փել, հարվածել, որից՝ զարկ (զ+հարկ) ժհարված, հով բառից՝ զով (զ+հով). արգ (որից՝ արգավոր, արգո և այլն) բառարմատից՝ զարգանալ (զ+արգ), որից՝ զարգացում. արդ բառարմատից՝ զարդ (զ+արդ) ժպաճուճանք, որից՝ արդ ու զարդ. զարդարել, զարդարանք, հին՝ զարդար, բրբ. զար-զարդարանք ժզարդի իրեր, զարդարանքներ, բրբ. զարուհ-զարդարուհ ժլավ զարդարված, պճնված. արք (որից՝ արքուն, արքնանալ) բառարմատից՝ զարքնել (հին՝ զարքնանալ) ժարթնանալ, որից՝ զարքուն ժարթուն. արմ բառարմատից՝ զարմ (զ+արմ), ժսերունդ, տոհմ, ազգ, որից՝ զարմիկ ժտոհմիկ, բարեձնունդ, զարմանալ (զ+արմանալ), զարմանք... և այլն:

գ) Ընդ (>ըն- || ըմ-) նախդիրով կազմված բառածևերն են (որ բառական շատ են), ընդառաջել ժրնդ առաջ ելանել ձևից (ժդիմավորել, աջակցել նշանակությամբ), ընդամենը (ընդ+ամեն) ժմկ. բոլորը միասին, բոլորի

գումարը կլինի (հմտ. ընդհակառակը). ընդարձակ (ընդ + արձակ) արձակ, լայնարձակ, որից՝ ընդարձակել, ընդարձակություն, ընդարձակում. ընդարմանալ (ընդ + արմանալ) ճի՛ն նշ. սաստիկ զարմանքից ապշել, սառած մնալ, շ. փետանալ, անզգայանալ, որից՝ ընդարմացում. ընդգրկել (ընդ + գրկել) ճի՛ն նշ. գրկել, գրկին առնել, գրկախառնվել, շ. ամփոփել, պարունակել իր մեջ, որից՝ ընդգրկում. ընդդեմ (ընդ + դեմ) չգեմ, հակառակ, որից՝ ընդդիմադիր, ընդդիմադրել, ընդդիմախոս չհակաճառող, ընդդիմախոսել, ընդդիմախոսություն, ընդդիմանալ չդիմադրել հակառակել. ընդհատ (ընդ + հատ) չընդհատված, կտրված, շ. ճի՛ն նշ. տարբեր, ջոկ, հեռացած, ջոկված, պակասը, նվազ, որից՝ ընդհատել || ընդհատվել, ընդհատում... ընձեռել (ընդ + ձեռն) ժմեկի ձեռքը մի բան տալ, շնորհել, պարգևել, որից՝ ընձեռում (հին՝ ընձեռումն) շնորհել, պարգևել. ընձյուղ (ընդ + ձյուղ) թժած սերմի արձակած ծիլը, շ. բողբոջ, չավիղ, ճյուղ, որից՝ ընձյուղել || ընձուղել թժել, բողբոջել, բուսնել. բրբ. ընտոր (ընդ + ր) ժմկ. ինչպես... և այլն:

դ) Ըսա (> ստ) նախդիրով կազմված բառաձևերն են (որ մի քանի հատ են պահպանված), օր.՝ ըստանձնել || ստանձնել (ըստ + անձն) թիբ վերացնել, հանձն առնել, շ. ճի՛ն նշ. ուրիշի վրա գնել, հանձնել, որից՝ ըստանձնում || ստանձնում (հին՝ ըստանձնումն) թիբ վրա վերցնել, հանձն առնել. հին՝ ստեգրել (ըստ + եգր) ժողովուրդը ձգել, հեռանալ... և այլն:

ե) Ի > յ նախդիրով կազմված բառերն են (որ բավական շատ են), օր.՝ իբր (ի + բր՝ հնչյունափոխված) թինչպես, որից՝ իբրև (ի + բր + և) ժողովես, հին՝ իբրու թիրբ, իրբև. իզուր (ի + զուր) չզուր. իսպառ (ի + սպառ) ժինչև սպառվել, մինչև վերջը, շ. բոլորովին. լանջիվայր (լանջ + ի + վայր) թևոտ լանջով գեղի վայր, բարբ. լանջիվեր (լանջ + ի + վեր) թևոտ լանջով գեղի վեր. բրբ. ծառնիվեր (ծառն + ի + վեր) թժոտի վրայով գեղի վեր. խառնիխուռն (խառն + ի + խուռն, բարբ. խառնիխուռնի, խառնիբշտոր թխառնափոխոր) ... հարձակվել (ի + արձակվել), որից՝ հարձակում (ի + արձակում). հավելված (ի + ավելված), հավելում (ի + ավելում). հուղարկել (ի + ուղի + արկանել) ճի՛ն նշ. ճանապարհ ձգել, շ. հուղարկավորել, թաղել, որից՝ հուղարկավոր ճի՛ն նշ. ճանապարհ ձգող, հուղարկավորել ճինջեցյալին ուղեկցել մինչև գերեզման. հօրինել (ի + օրինել՝ օրենք բառից) ճի՛ն նշ. օրենքով մի բան հաստատել, կարգավորել, շ. սահմանել մի բան, ստեղծել, շինել և այլն:

զ) Ց նախդիրով կազմված բառերն են, օր.՝ հին ցայգ (ց + ալգ, հմտ. ց + երեկ) ժինչև ալգ, մինչև լույս, գիշերը, շ. գիշերով, գիշերը, որից՝ ցայգանվազ կամ ցայգերգ ժամանակը ինչու և մեկի պատուհանի առաջ՝ ներսը ապրողին հարգանք մատուցելու համար. ցայծմ (ց + ալծմ) ժինչև ալծմ, մինչև հիմա. ցայսօր (ց + ալս + օր) ժինչև ալսօր. ցանկ (ց + անկ, հմտ. անկանկ, ոստայնանկ և այլն) ժանկապատ, պատնեշ. հին ցանկ (ց + անկ) ժինջև վերջը, իսպառ, շ. շարունակ, միշտ. ցարդ (ց + արդ) ժինչև ալծմ, ցերեկ (հին՝ ցերեակ՝ ց + երեկո), որից՝ ցերեկույթ (ց + երեկույթ, հմտ. երեկույթ) ժանգես, հրճվանք, որ տեղի է ունենում ցերեկը. ցմահ (ց + մահ) ժինչև ի մահ, մինչև մեռնել. ցպահանջ (ց + պահանջ) և այլն:

Սրանք մեծ մասամբ քարայրած բառաձևեր են (որոնց մեջ հաճախ նույնիսկ բաղադրիչ տարրերը չեն դիտակցվում), որ ալծմ դարձել են ընդ-

հանուր առմամբ առանձին բառարժեքներ ու բառական միավորներ, և այս կամ այն չափով հարստացրել են հայոց լեզվի բառային կազմը: Այսպիսով, լեզվի նոր որակի տարրերի աստիճանական ու տևական կուտակումով—հին բառերի ձևա-բովանդակական տարրեր փոփոխություններով, նոր բառակազմումներով, բառափոխառություններով և այլն՝ բառային կազմն աճում է ու զարգանում՝ ավելացնելով անհամեմատ շատ նոր բառեր: Սակայն, չնայած այս բոլորին, միաժամանակ, հին որակի տարրերի աստիճանական մահացումով՝ բառային այդ նույն կազմից սովորաբար դուրս են ընկնում որոշ քանակությամբ հնացած բառեր:

Հայոց լեզվի բառային կազմից դուրս ընկած հնացած բառերը լինում են պարզ, ածանցավոր ու բարդ: Հաճախ ածանցավոր ու բարդ բառերի բաղադրամասերը առանձին վերցրած՝ հասկանալի են, բայց այդ առանձին հասկանալի բաղադրամասերից կազմված տվյալ բարդությունները մեծ մասամբ հնացած են լինում իմաստի տեսակետից ու անհասկանալի:

Եսի՝ վերցնենք պարզ կամ որպես պարզ ձևացող, կամ որոշ ածանցավոր բառերը, որոնք լինում են.

ա) Իրենց նշանակությունը միանգամայն մրազնած ու հնացած բառեր, որոնք մնում են միայն հին բառային կազմում (գրաբարում և գրաբարի բառարաններում). դրանցից են, օր.՝ աղամոզ ժած. շեղված, մոլորված, 2. ցրված, որից՝ սղամոզել բայը և աղամոզումն գոյականը. աղանդել լեզվաբարդել, մոլորեցնել, որից՝ աղանդիք կամ աղանդիք լեզվաբարդություն, կախարդական գործեր, իրեր ու գրվածքներ. աղծեալ ժած. աղած, աղով պահված. աղկաղկ ժած. թույլ, տկար, 2. աղքատ, խեղճ, 3. չնչին, անարգ, անպետք, որից՝ աղկաղկել բայը և աղկաղկություն գոյականը. աղունք լեզվաբարդություն, չարիքներ. այս ժողով, ոգի (շունչ), չար ոգի, որից՝ այսակիր, այսահալած, այսահար, այսամուտ, այսոտ. այսր, այդր, այնր ժողովի այստեղ, դեպի այդտեղ, դեպի այնտեղ. արկանել ժողով, նետել, որից՝ արկ և առ ճամփաշար. արքել կամ արքոտել ժողովի թույլ, վեր-վեր ընկնել, ոստոստալ, աքաղել. բայ կամ բայոց ժողովանների, այլև սողունների որջ. զանգ կամ զանգիւն ժառանգ՝ աղմուկ, որ առաջ է գալիս առարկաներն իրար զարկվելուց, հմտ. զանգաշ. զայո լեզվաբարդ ելի, աղր, ապականություն, որից զայոռո լեզվաբարդ, ցեխոտ. զծիռ ժած. խոծոտ, խիստ, զծկամակ, ծանր (խոսքի մասին). Երախան լեզվաբարդ, հաղկերույթ, խրախճան, 2. սեղանակիցների խումբ, բազմություն. ծարել լեզվաբարդ բացվել, ծաղկել. խուն լեզվաբարդ, փոքր խնչ, սակավ. խոշոշել լեզվաբարդ սպանել, խոզխոզել. կույս լեզվաբարդ. սոր լեզվաբարդ, կարծր, կուռ. ստե լեզվաբարդ մազ՝ բուրդ. և այլն:

բ) Կրոնական-եկեղեցական որոշ բառեր, որոնք նեղ գործածություն են ունեցել և առարկաների հետ միասին գործածությունից դուրս են եկել, ինչպես օր.՝ բողոն=աղաբողոն=փիլիս, ուրար (որից՝ բազկուրար), վեղար, սկիհ... և այլն:

Այնուհետև՝ վերցնենք ածանցավոր ու բարդ բառերը, որոնց բաղադրամասերը հաճախ թեև հասկանալի են և առանձին գործածական, բայց այդ հասկանալի բաղադրամասերից կազմված որոշ բաղադրություններ ու բարդություններ մեծ մասամբ անհասկանալի են լինում իրենց արտահայտած երբեմնի իմաստով: Դրանցից են, օր.

ա) Այն անանգավոր բառերը՝ որոնց արմատները առանձին գործածական բառեր են, *ինչպես* օր.՝ բազուկ *բառից* գրար. բազկել *բազուկները կտարատել, կրճատել*։ բաժակ *բառից*՝ գրար. բաժակել *ածառի շուրջը փոս գոյացնել՝ քրելու համար*։ զինի *բառից*՝ գրար. զինեակ *ամի քիչ գինի* և զինել *թիկթիկ գինովնալ, գինով զվարթանալ, գինուց բացվել*։ բօր *սխալ լուր* և *բառից*՝ գրար. բօրել *սխալ լուր հաղորդել, գուժել*։ աղեղ (ն) *բառից*՝ գրար. աղեղնաժ *աղեղով զգած բամբակ*։ ամբիժ *բառից*՝ գրար. ամբանալ *ամբիժ դառնալ, մաքրվել, սրվել*։ ամոքել *ամեղմացնել, բարեխառնել, մեղմել, հանգստացնել* կամ ամոքում *ամեղմացում, հանգստացում* և *բառից*՝ ամոքանք *համեղացնող նյութեր, համեմունք*։ բախել *խփել* և *բառից*՝ գրար. բախած *ած. խելքից զարկված, խելագար, հիմար*։ գէշ *սլեշ* և *բառից*՝ գրար. գիշել *զգիշատել*։ այլ *բառից*՝ գրար. այլուրյուն *սայլ՝ ուրիշ լինելը, տարբերություն, պեսպեսություն*։ աղքատ *բառից*՝ գրար. աղքատանք *աղքատություն, աղքատիկ վիճակ՝ գրություն և այլն*։

բ) Այն բարդ և բարդ-անանգավոր բառերը, որոնց բաղադրամասերը առանձին-առանձին գործածական բառեր են, բայց նրանց բարդության իմաստը նենցած են. *աչսպես* օր.՝ աղջիկ և որդի *բառերից*՝ գրար. աղջկորդի *աղջկանից՝ մարդու չգնացած մորից ծնվածը, ապօրինի զավակ*։ աղքատ և ջէն *բառերից*՝ գրար. աղքատաշէն *աղքատ՝ հասարակ շինվածք ունեցող, ոչ շքեղ*։ անում(ն) և ձիգ *բառերից*՝ գրար. անումնաձիգ *կամ անունաձիգ աճած և ձգված, տարածված*։ ամպ և գործ *բառերից*՝ գրար. ամպագործ *ամպից շինված, ամպեղեն*։ այլ և զուրկ (կամ՝ զիրկ) *բառերից*՝ գրար. այլազուրկ (կամ՝ այլազիրկ) *սուրիշին զրկող*։ այլ և կամք *բառերից*՝ գրար. այլակամք *զգ. ուրիշ կամք՝ հոժարություն, Չ. ա. ուրիշ կամք՝ հոժարություն ունեցող*։ այլ և միտ *բառերից*՝ գրար. այլամիտ *սուրիշ միտք՝ գիտափորություն ունեցող, միտքը փոխված՝ ալլալված, որից՝ այլամտել ամիտքը շուտ տալ, հիմարացնել*։ այլ *բառի կրկնություն*՝ գրար. այլայլ *ալլալված, որից՝ այլայլակ ալես-պես, ալլալալ ձև, գուշ... ունեցող, տարբերվող, այլալլասեռ ալլալալ սեռի, զանազանատեսակ*։ այլ և ասել *բառերից*՝ գրար. այլասացիկ *կամ այլասացություն ալլալալանություն*։ այժ և նեժնել *բառերից*՝ գրար. այժանեժնել *այժ հեժած (օր.՝ Այժանեժնել կոտորած)*։ այսօր և ձին *բառերից*՝ գրար. այսօրաձին՝ *այսօր ծնված, նորածին, Չ. նոր առաջ եկած*։ բազում և պայծառ *բառերից*՝ գրար. բազմապայծառ *շատ պայծառ՝ փայլուն, շատ շքեղ, հոյակապ*։ բազում և տանել *բառերից*՝ գրար. բազմատար *շատ բան իր մեջ տանող՝ պարունակող, ընդարձակ*։ բարի և երջանիկ *բառերից*՝ գրար. բարերջանիկ *շատ երջանիկ, երանելի, երանավետ, որից՝ բարերջանկություն բարերջանիկ լինելը*։ բարի *բառի կրկնություն*՝ գրար. բարի-բարի *սրույր լավերը*։ բարձր և բազուկ *բառերից*՝ գրար. բարձրաբազուկ *բարձր բունող, գործարար, հաղթող և այլն*։

Նման բարդությունների թիվը անհամեմատ շատ է, և դրանց մի մասը կարող է գործածվել երբեմն նոր իմաստով կամ իմաստի որոշ երանգավորումով ու զարգացումով (փոփոխություն)։ Չենք խոսում արդեն այն մասին, որ այդ բարդությունների բաղադրամասերը (պարզ բառերը), *ինչպես* արդեն ասացինք, մեծ մասամբ առանձին գործածական են, որպես ինքնուրույն բառեր։ Այնուհետև՝

դ) Այն բարդ և անցյալի բառերը, որոնց բաղադրամասերից մեկը հնացած է ու առանձին անգործածական և մյուսը՝ առանձին գործածական, բայց ամբողջ բարդության իմաստը հնացած է. *այսպես օր.* աղբերկ *աղբերկ* խառն *կամ աղիքանման գանգուր* (աղի *աղիք* հնացած բառից). ամբարձագնաց *գեղի վեր գնացող, բարձրագնաց* (ամբարձ *արմատն է գրար. ամբառնալ տեղիցնել, վեր բարձրացնել, բարձր աստիճանի հասցնել, կանգնեցնել* բայի), ամբարձաթիղ *գեղի վեր թռչող, բարձրաթիղ*, ամբարձածիգ *գեղի վեր ձգվող, բարձր տարածվող*, ամբարձասաստ *սխալ սաստող, ահեղ*. այլուստեք *տուրի տեղից, մյուս կողմից* (գրար. ուստեք *տուրի տեղից բառից*). այլուրեմն *մի ուրիշ տեղ, մի ուրիշ տեղում* (գրար. ուրեմն *ուր բառ է մեմ մասնիկ թինչ որ մի տեղ, ինչ որ մի տեղում, հմմտ. ուրեք*). արևելակույս *արևելյան կողմ* (գրար. կույս *եկողմ*). բյուրազգի *բազմատեսակ, տեսակ-տեսակ, շատ կերպերով* (հին՝ ազգի *տեսակ*). գրկարկել *գրկել* (գրկել *արկանել*). որից՝ գրկարկություն *գրկարկելը, գրկելը, ողջագուրանք*. քաթահերձ *եղջակաբաշխ, եղջակավոր* և այլն:

դ) Այստեղ պետք է նշել, վերջապես, այն բառերը, որոնք հնում լայն տարածում են ունեցել և սովորական գործածական են եղել և այժմ մեծ մասամբ բարբառային են դարձել (բայց հաճախ ոչ նեղ բարբառային). *գրանցից են, օր. (երբեմն որոշ հնչյունափոխություններ, երբեմն էլ իմաստի որոշ երանգավորումով)*՝ գրար. այգուց || յայգուց *մի. առավոտվանից, 2. վաղը առավոտ, որից՝ բարբ. էգուց միգր. գրար. բոցուտել = բարբ. բոցուտվել բոց արձակել, վառվել. 2. փխր. կիրք բորբոքվել. գրար. գիշերուկ = բարբ. գիշերուկ միգր. գրար. գնել = բարբ. գուհել || գնել || գնկվել գուհ գալ, ծունկ չոգել, փխր. խոնարհվել, մեկի ոտներն ընկնել. գրար. գոլ տաքություն, 2. կրակի բոց, 3. գոլորշի, 4. ած. ոչ շատ տաք = բարբ. գոլք տաքություն, 2. ախոռներում անասունների շնչառությունից առաջացած գոլորշախառն տաք օդը, որից՝ բարբ. գոլան գոլ ամիս, հատկապես մայիս ամիսը, գոլ(ա)նալ տաքանալ, ջերմանալ, գոլգոլել մի քիչ գոլ, տաքուկ, գոլել ծայրել, վառել, 2. տաքանալ, գոլխրել զրահել արծարծվել, չաղանալ, 2. փխր. բորբոքվել, հուզվել և այլն:*

Սովորաբար հնչյունափոխությունը (= բառի ձևափոխությունը) իմաստային ոչ մի փոփոխություն կամ երանգավորում առաջ չի բերում, և նման դեպքերում թեև որոշ բառեր այլակերպվում են (ձևափոխվում), բայց հաճախ բառական նոր արժեք չեն ստեղծում. հիմնականում մնում են հին արժեքներով: Ուստի բառերի նման ձևափոխությունը, որի նետեվանքը լինում է բառերի կրճատումը կամ կարճացումը, սովորաբար լեզվի բառային կազմը չի հարստացնում:

Այդ փոփոխությունը կատարվել է մեծ մասամբ՝

ա) Գրաբարից աշխարհաբարին անցած որոշ բայաձևերի մեջ, որոնց ան և եցուցան ածանցները հնչյունափոխվում են կամ գուրս են ընկնում (*այսպես՝ ան > -ն || (գերո), -եցուցան > -եցն*), օր.՝ *անցանել > անցնել, անկանել > րնկնել, գտանել > գտնել, իջանել > իջնել, հագանել (ազանել-ից) > հագնել, մտանել > մտնել, տեսանել > տեսնել, լուծանել > լուծել || լուծվել լքանել (նաև՝ լքնուլ) > լքել, կծանել > կծել, ծանանել > ծնել, || ծնվել, սպանանել > սպանել, խածանել > խածնել || խածել խայթել, կծել (նաև՝ բրբ. խածմը*

ծել), հատանել > րբբ. հատնել *ժվերջանալ* և հատել *ժկտրել* ծ, *պագանել* > րբբ. պագնել և պագել *ժհամբուրել* ծ, *զարկանել* (<զ + հարկանել) > զարկել և զարնել, *թթուեցուցանել* > րթվեցնել, *թմրեցուցանել* > րմրեցնել, *այլն՝ սատակել* > սատկել, *արտասուք* > արցունք,* *սեպունական* և *սեպական* > սեփական, *սալոր* > ղոր և այլն:

բ) Բառերից որոշ վանկերի դուրս ընկնելով, մի քանի բառի կրճատման կամ հապավման միջոցով իրար միացումով և մի բառական արժեք ստեղծվելով, որ մեծ մասամբ բարբառային երևույթ է (*գերագանցապես պատահելով բարբառներում*):

Նախ և առաջ, իրար կողքի գտնվող միատեսակ վանկերից մեկը երբեմն դուրս է ընկնում *խնչպես գրական հայերենում, այնպես էլ բարբառներում (մեծ մասամբ բարդ կամ բաղադրյալ բառերի մեջ)*, օր.՝ *գրակ. աշխարհահայացք ձեռք՝ աշխարհայացք, գրակ. աշխարհահայեցողություն ձեռք՝ աշխարհայեցողություն, գրակ. հասարակակարգ ձեռք՝ հասարակարգ, գրակ. աշխարհային ձեռք՝ աշխարհային (այսպես է նաև գրաբարում, որ թերևս աշուն բառի և -ային ածանցի միացումից է կազմված** *աշունային* > *աշնային*), *գրակ. զարնանային ձեռք՝ զարնային (որ այժմ ընդունված չէ)*, մակակացություն *ձեռք՝ գրաբ. մակացություն (մակ և կացություն) ժմի բանի վերահասու լինելը, գիտենալը, գիտություն, հմտություն, գիտելիք* ծ, աղտամաճերկ *ձեռք՝ բարբ. աղամաճի նման մեղկ, բոլորովին մեղկանդամ* ծ, աշնանավար *ձեռք՝ բարբ. աշնավար, աշնանացան ձեռք՝ բարբ. աշն(ա)ցան*, բազկակապ *ձեռք՝ բարբ. բազկապ ժրագուկների կապ, որով երևիային կապում են օրորոցի մեջ* ծ, բարիիրիկուն *ձեռք՝ բարբ. բարիիրիկուն*, խարունմամա *ժմեծ մայր* ծ *ձեռք՝ բարբ. խարունմա և խարմա (ուն էլ է կրճատված, կա նաև խարմամա)*, տերտերսկին *ձեռք՝ բարբ. տերակին*, օրորել *ձեռք՝ բարբ. օրել և այլն*:

Այնուհետև՝ որոշ բառերից (մեծ մասամբ՝ բարդված բառերից) դուրս են ընկնում որոշ մասեր (վանկեր) ու հնչյուններ (կամ հնչյունախմբեր) սովորաբար բարբառներում (որոշ դեպքեր կան նաև գրաբարում, իսկ գրական մեր լեզվին խորթ է). այսպես օր.՝ *գրաբ. եղնորք ժեղնիկի հորթ* ծ (եղնիկ և հորք բառերից). *գրաբ. հանա և բարբ. հան ժահա, ահավասիկ, ահա նա* (ահա և նա բառերից). *բարբ. մակավսար* < *մակահապսար ժմիկնուն բարձրություն վրա՝ եղող, հավասար բարձրություն, Չ. զույգ և հավասար, նման* (մակ և հավասար բառերից), *գրաբ. վշտմբեր և վշտամբեր ժվրշտեր կրելու սովորած, վշտակիր, վշտակից* ծ (վիշտ և համբերել բառերից), *որից՝ գրաբ. վշտամբերություն ժվշտամբեր լինելը, չարչարալից կյանք, ճգնություն, նեղություն* ծ (վիշտ և համբերություն բառերից). *բարբ. աղացք և գրաբ. աղացք (և աղուհացք) ժաղ ու հաց, մեծ պասի օրերը* ծ (աղ և հաց բառերից), *բարբ. աշխարհակործում ժաշխարհի կործանում* ծ (աշխարհ և կործանում բառերից), *բարբ. աշնհավք ժաշնան հավք* ծ, *բարբ. բանջրխի ժբանջարդի* ծ, *բարբ. գործար ժգործարար, սարդ* ծ, *բարբ. դլ = գրաբ. ընդ այլ ձեռք, բարբ. դէս = գրաբ. ընդ այս ձեռք, բարբ. դէն = գրաբ. ընդ այն ձեռք...* և այլն:

Վերջապես, այստեղ պետք է բերել նաև մի քանի բառի կամ առանձին նախադասությունների կրճատման կամ հապավման միջոցով իրար միանալուց առաջացած որոշ բառական միավորներ, ինչպես օր.՝ երկրապագել

(գրար. երկիր պաղանել), մտածել (գրար. գմտալ սւծել), բափանցել (գրար. բափ անցանել || զբափ անցանել || ընդ բափ անցանել), բարբ. եսիմ (գեա ինչ իմանամ չ կրճատված) || եսնամ (գեա ինչ իմանամ չ կրճատված) և այլն, և այլն:

Այս բոլորով հանդերձ, ինչպես տեսանք, բառերի ձևական, իմաստային և ձևաիմաստային փոփոխումներով ու զարգացումով, սեփական բառաստեղծական կամ բառակազմական միջոցներով, փոխառություններով և այլն՝ պարզ է, որ ընդհանրապես լեզվի բառային կազմն անընդհատ փոխվում, զարգանում է: Սակայն թ... ինչ վերաբերում է բառային հիմնական ֆոնդին, — գրում է ընկեր Ստալինը, — ապա այն հիմնականում պահպանվում է ամբողջապես և օգտագործվում որպես լեզվի բառային կազմի հիմք¹:

Հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդն էլ, որի մեջ մտնում են նաև բոլոր արմատական բառերը, որպես նրա միջուկը, բնականաբար, շատ ավելի պակաս ծավալ ունի, քան նրա բառային կազմը (— լեզվի մեջ գոյություն ունեցող բոլոր բառերը միասին վերցրած), բայց այն (— բառային հիմնական ֆոնդը) ապրում է շատ երկար, դարերի ընթացքում և լեզվին հիմք է տալիս նոր բառերի կազմության համար՝ սեփական բառաստեղծական կամ բառակազմական (բառածանցման ու բառարարման) միջոցներով:

Այս տեսակետից էլ լեզվի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունի բառագիտությունը, որն ավելի լայն սահմաններ է ընդգրկում, քան բառակազմությունը: Պարզ է, որ բառագիտությունը զբաղվում է լեզվի բառապաշարի կամ բառային կազմի ուսումնասիրությամբ. ցույց է տալիս, թե որքանով հարուստ է տվյալ լեզվի բառապաշարը և բառապաշարի հարստացման ինչ ուղիներ կան (սեփական բառաստեղծական կամ բառակազմական, այն է՝ բառածանցման և բառարարման միջոցները, բառերի ձևաբովանդակական փոփոխություններն ու իմաստի զարգացումը, բառափոխառությունները և այլն):

Հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ են մտնում և, անշուշտ, տասնյակ դարերի պատմություն ունեն, օրինակ, հետևյալ բառերը (որ պահպանված են այսօր գրեթե անփոփոխ ձևով). արտ, արոտ (հին՝ առօտ < առաւտ) սար, ձոր, դաշտ, հովիտ, ժայռ, անտառ, ծառ, հող, լեռ (հին՝ լեառն), բլուր, ջուր, գետ, ծով, ամպ, անձրև, հով, քամի, բուք, երկինք, երկիր, գետին... տոհմ, տուն, տեղ, գյուղ (հին՝ գիւղ), խրհիք, բակ. դուռ (հին՝ դուռն), նետ, աղեղ (հին՝ աղեղն), բի. որս, ջուհ, ձի, եղջերու, եղջյուր (հին՝ եղջիւր), կատու, հավ, ձու, խոզ, մաքի, եգ (հին՝ եզն), ոչխար, բու, արջ, կորյուն (հին՝ կորիւն), գալան, գայլ, ձուկ (հին՝ ձուկն)... մաշկ, կաշի, մորթ(ի)... կրակ, հուր, բոց, ծուխ, ածուխ, գերան, գոմ... քար, ոսկի, երկաթ... սեղան, հաց, ցորեն (հին՝ ցորեան), կալ, կեր, խուրձ, բակ... բանջար, խոտ, բողբոջ, ծիլ, ծաղիկ, բոդկ... խնձոր, ծիրան, խաղող, բուգ, սալոր, դեղձ, ընկույզ (հին՝ ընկոյզ || ընգոյզ), գինի... մաքղ, կից, աղջիկ, գավակ, որգի, ձեռք, ոտ (հին՝ ոտն), բաք, բիզ, դեմք, գլուխ, գանգուր, ականջ, լեզու, մատ (հին՝ մատն), մորուք, (հին՝ մօրուք < մաւրուք), քայլ, ձայն... խումբ, կարգ... արև, լուսին, աստղ, շող, փայլ, ամիս, տարի, դար, զիշեր, ծիածան և այլ նման բազմաթիվ բառեր:

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 56:

Բառային հիմնական ֆոնդը, բնականաբար, մտնում է բառային կազմի մեջ, որ, ինչպես հայտնի է, լինելով լեզվի շինանյութը՝ ամեծագույն նշանակություն է ստանում, երբ այն դրվում է լեզվի քերականության տրամադրության տակ¹։

Բառային հիմնական ֆոնդի մեջ մտնում են, սակայն, արմատական բառերն ու բառարմատները։ Այսպես, օրինակ, զյուղ (հին՝ գիւղ), տուն... արմատական բառերը և տես-, անկ-, վար-, արար-, գետ-... բառարմատները, անշուշտ, մտնում են հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ և երկար դարերի պատմություն ունեն։ սրանք իրենց հերթին դրվելով հայոց լեզվի քերականության տրամադրության տակ՝ սեփական բառակազմական կամ բառաստեղծական միջոցներով, այն է՝ բառածանցման ու բառարարման միջոցներով (օգտագործման դնելով սովորաբար հոգակապը՝ ա և տարրեր ածանցներ՝ -ուրյուն, -ուհի, -ում, -ել, -ական, -ացի || -եցի, -ային, -ան, -ացում, -ացնել, -վոր, -ովի, -չ, -ք, -նել, -մունք, -իչ, -ած, -ուն, -նական և այլն) հիմք են տվել ու հիմք են տալիս նոր բառերի կազմությանը (իսկ դա բառային կազմի հարստացման ու զարգացման ամենահիմնական ու ամենակարևոր միջոցն է)։

Այսպիսով, վերոհիշյալ զյուղ, տուն արմատական բառերից և տես-, անկ-, վար-, արար-, գետ- բառարմատներից քերականական տարրեր միացումներով ստանում ենք չորս տասնյակից էլ ավելի բառային միավորներ, որոնք իրենց հերթին մտնում են հայոց լեզվի բառային կազմի մեջ. դրանցից են, օրինակ, տն-տես, տն-տես-ուհի, տն-տես-ա-գետ, տնտես-ա-գիտ-ուհի, տն-տես-ուրյուն, տն-տես-ում, տն-տես-ել, տն-տես-ական, տն-տես-ա-վար, զյուղ-ա-տն-տես, զյուղ-սւ-տն-տես-ուհի, զյուղ-ա-տն-տ-ես-ական, զյուղ-ացի, զյուղ-ական, տն-եցի || տան-եցի, տն-ային, բարբ. տն-ա-վար-ի, տն-ա-վար-ուրյուն, ան-տուն, տն-անկ (հին՝ ան-անգ), տն-անկ-անալ, տն-անկ-ացում, տն-անկ-ացնել, տն-անկ-ուրյուն, տն-արար, տն-սրար-ուրյուն, տն-վոր, տն-վոր-ուհի, տն-ովի, ան-տես, ան-տես-ում, չ-տես, տես-ք, տես-ուրյուն, անկ-ում, անկ-ում-ային, րնկ-նել (հին՝ անկ-անել), վար-ք, վար-ել, վար-ում, վար-մունք, արար-ք, արար-մունք արար-իչ, արար-ած գիտ-ուն, գիտ-նական... և այլն։

Ձևայած նրան, որ տվյալ բառակազմությունների, այն է՝ բառարար-դումների ու բառածանցումների մեջ կան հին ու նոր բաղադրումներ, բառերի իմաստափոխությունն ու իմաստի զարգացում (օր.՝ տնավարի բառը բարբառային ձև է, իսկ տնտեսել՝ հին, որ դրարարում նշանակել է թիրե տնտես տան գործերը կատարել, 2. մատակարարել, հայթայթել, հոգալ, իսկ այսօր՝ իմաստի փոփոխումով ու զարգացումով՝ տնտեսաբար վարվել, խնայողաբար գործածել, 2 խնայելով մի բան ետ գցել և այլն)։

Այսպիսով, արմատական բառերն ու բառարմատները հանգիստանալով նոր բառերի կազմության հիմքը և շնորհիվ սեփական բառակազմական միջոցների (օր.՝ հոգի, ածանցների և այլն)՝ որպես բառապաշարի հարստացման բուն աղբյուր անընդհատ փոփոխում և հարստացում են բառային կազմը (չհաշված փոխառությունները)։

Ընդվի բառային կազմը սովորաբար փոխվում, համալրվում է սոցիալական կարգի փոփոխությունների, արտադրության զարգացման, կուլտուր-

¹ Բ. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 32։

բայի, գիտություն և այլնի վարդապետական կապակցությունը առաջացած նոր բառերով: Այդպիսով, լեզվի բառային կազմը բազմակողմանի է դառնում և անընդհատ հարստանում է: Մերքան ավելի հարուստ և ավելի բազմակողմանի է բառային կազմը,—գրում է ընկեր Ստալինը,— այնքան ավելի հարուստ ու ավելի վարդապետ է լեզունը:¹

Հայոց լեզուն էլ իր տարրերը սաղմնավորելով գեոևս խոր հնագուրում՝ եղել է ոչ-բարդ լեզու՝ բառային շատ աղքատիկ ֆոնդով և քերականական պրիմիտիվ կառուցվածքով: Շնորհիվ արտադրության հետագա վարդապետան, դասակարգերի երևան գալու, գրության ստեղծման, պետության ծագման, առևտրի և գրականության վարդապետան՝ մեծ փոփոխություններ են առաջ եկել հայոց լեզվի վարդապետան մեջ: Այդ ժամանակամիջոցում ցեղերի ու ժողովուրդների կոտորակվելու և բաժանվելու, խառնվելու և խաչավորվելու բնթաղքում հայոց լեզուն հաղթող դուս գալով և պահպանելով իր քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը, միաժամանակ հարուստացնելով իր բառային կազմը ի հաշիվ պարտված լեզուների, շարունակել է վարդապետ իր վարդապետան ներքին օրենքներով:

Ինչպես մյուս լեզուների, հայոց լեզվի և նրա վարդապետան մեջ էլ ավելի մեծ փոփոխություններ են առաջ գալիս հետագայում, ազգային լեզուների և պետությունների երևան գալու, ուղղակիորեն հեղաշրջումների, հին հասարակական կարգերը նորերով փոխարինվելու ժամանակամիջոցում: Այդ բնթաղքում թեև հայոց լեզվի բառային կազմից դուրս են բնկել որոշ քանակություններ՝ հնացած բառեր, բայց նրան ավելացել են ավելի շատ նոր բառեր: Իսկ բառային ֆոնդը, որպես մի շարք վարաշրջանների արդյունք, հիմնականում պահպանվել է ամբողջապես և օգտագործվել է որպես բառային կազմի հիմք:

Մյուս լեզուների նման՝ հայոց լեզվի գիմացկունությունն էլ բացատրվում է նրա բառային հիմնական ֆոնդի ու քերականական կառուցվածքի գիմացկունությամբ: Հարյուրավոր տարիներ շարունակ Անդրկովկասի տերիտորիայի վրա կոփվում էր անդրկովկասյան ժողովուրդների, մանավանդ հայ ժողովրդի բախտը: Նախքան ուսական իշխանության հաստատվելը զանազան կողմերից այդ երկրամասը ծանր հարվածների են ենթարկել սկզբում ասորա-բարեկաղիները, հին պարսկական միապետները, հատ հույները, պարթևները և հոմի գործարները, բյուզանդացիները, սասանյանները և արարական ու թյուրք-թաթարական նվաճողները, թյուրք-սելջուկները և այլն: Անդրկովկասի, մանավանդ Հայաստանի վրա տարածվող քաղաքական ճնշումները կամ ուղղակի գործողությունները, նվաճողական ու ասիմիլյատորական քաղաքականությունը, որ վերջին հաշիվով ուղղված էր անդրկովկասյան ժողովուրդների, մանավանդ հայ ժողովրդի ինքնությունը գոյություն ու նրա լեզվի գեմ, չկարողացավ հայոց լեզուն զրկել իր վարդապետան ներքին օրենքներից ու օրինաչափությունից: Այդ ժամանակաբնթաղքում ինչպես անդրկովկասյան մյուս լեզուների, այնպես էլ հայոց լեզվի բառային կազմը ենթարկվեց լուրջ փոփոխությունների, յուրացվեցին ոչ-սակավ թվով ասորական, հելենա-հունական, պահլավապարսկական, արարական, թյուրք-թաթարական և այլ լեզուների բառեր ու արտահայտություններ, բայց հայոց լեզուն գիմացավ և ապրեց:

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 51—52:

Հայ պետականությունը չէր համակենտրոնացել և միավորվել հայոց ընդհանուր խոսակցական լեզվին (գրաբարին), նրա վերացման ժամանակ ոչ թե համակենտրոնացման ու միավորման միտումն ուժեղացավ, այլ՝ այդ բարբառների անջատման ու հեռացման միտումը։ Այսպիսով հայ խոսակցական լեզուն (աշխարհարարը) աստիճանաբար այնպես տարբերվեց ին գրական լեզվից՝ գրաբարից, որ վերջինս միջին դարերում արդեն լրիվ հասկանալի չէր հայ ժողովրդին։ Չնայած դրան, հայ ժողովրդի խոսակցական լեզուն՝ աշխարհարարը, որ հիմք հանդիսացավ հայոց նոր գրական լեզվին, հանգման ու ընդհանուր շատ ու շատ կետեր ունեւ ին գրական լեզվի՝ գրաբարի հետ։ Այսպիսով, հայոց լեզուն այնուամենայնիվ դիմացավ ու ապրեց, որովհետև այդ լեզվի փերականական կառուցվածքը և բառային ֆոնդը հիմնականում պահպանվեցին։

Հայոց լեզվի փերականական կառուցվածքը և բառային ֆոնդը հիմնականում պահպանվելով՝ այնուամենայնիվ որոշ փոփոխություն են կենթարկվել ժամանակի ընթացքում։ Այս, իրոք, դարաշրջանների ընթացքում մշակված և լեզվի մեջ միա ու արյուն դարձած հայոց լեզվի փերականական կառուցվածքը փոխվել է համեմատաբար շատ ավելի դանդաղ, քան նրա հիմնական բառային ֆոնդը։ Այդ փոփոխությունը դրսևորվել է հատկապես փերականական կառուցվածքի կատարելագործումով, բարելավումով, կանոնների ճշգրտումով և հարստացումով, նորանոր կանոններով։

Բերենք մի փոքրիկ օրինակ։

Հայտնի է, որ մեր աշխարհարարի խոնարհման ձևերը (=բայաձևերը) կազմությունը մասամբ նոր են, մասամբ էլ նույնն են ին՝ գրաբարի ձևերի հետ, որոշ հնչյունափոխությամբ, կամ հնչյունափոխության հետ միասին նաև իմաստի որոշ փոփոխությամբ (եղանակի շրջումով և այլն)։ Օրինակ՝ աշխարհարարի անցյալ կատարյալի ձևերը որոշ հնչյունափոխությամբ համարյա թե բոլորովին նույնն են գրաբարի համապատասխան ձևերի հետ։

Այնուհետև՝ մեր աշխարհարարի ըղձական եղանակի ձևերը նույնն են գրաբարի սահմանակամ եղանակի ներկայի և անցյալ անկատարի ձևերի հետ՝ որոշ հնչյունափոխությամբ և, այսպես ասած, եղանակի շրջումով։ Գրաբարի սահմանական եղանակի ներկայի ձևերը նույնն են աշխարհարարի ըղձական եղանակի ներկայի ձևերի հետ, իսկ գրաբարի սահմանական եղանակի անցյալ անկատարի ձևերն էլ նույնն են աշխարհարարի ըղձական եղանակի անցյալի ձևերի հետ (որոշ հնչյունափոխությամբ)։

Մեր աշխարհարարում ըղձական եղանակի բայաձևերի սկզբից ավելանում են եղանակիչներ (կը, պիտի) և ստանում ենք նոր եղանակներ (ենթադրական և հարկադրական), որ գրաբարում չկան։ Հայերենի բայարբանների վրա ավելացած վերջածանցները (գեմքի նշանները), ինչպես գրաբարում՝ եզ. գնա-մ, գնա-ս, գնա-յ (նոր՝ գնա՝-յ գեմքի նշանի անկումով), հոգն. գնա-մք (նոր՝ գնա-նք), գնա-յք (նոր՝ գնա-ք), գնա-ն՝ արտահայտել են ու արտահայտում են բայերի գեմքեր՝ իրեն ենթակա, ուստի հայերենում բայերի երեք գեմքերը և նրանց թիվը, եզակի և հոգնակի, միշտ որոշ են։ Սա ցույց է տալիս, որ լեզվի փերականական կառուցվածքը փոխվում է ավելի դանդաղ, քան բառային հիմնական ֆոնդը, նա փոխվում է

աստիճանական զարգացումով ու կատարելագործումով, քերականական կանոնների ճշգրտումով և հարստացումով՝ նոր կանոններով:

Այդ փոփոխությունները դարերի պատմություն ունեն, քանի որ լեզվի քերականական կառուցվածքը շատ ավելի կայուն է ու գիմացկուն, քան բառային հիմնական ֆոնդը. չենք խոսում արդեն բառային կազմի մասին, որ առավել զգայուն է փոփոխությունների վերաբերմամբ և, որպես անհրաժեշտ լեզվանյութ, գրված է քերականության տրամադրություն տակ:

Հայոց լեզվի մեջ էլ գոյություն ունեցող բոլոր բառերը միասին՝ հանդիսանալով ավյալ լեզվի բառային կազմը, ինքնին վերցրած, գեոևս լեզու չեն կազմում. Ե... լեզվի բառային կազմը չի կազմում բուն լեզուն, թեև առանց դրան աներևակայելի է որևէ լեզու — գրում է բնկեր Ստալինը¹: Չնայած նրան, որ լեզվի բառային կազմը չի կազմում բուն լեզուն, բայց այն մեծագույն նշանակություն է ստանում, երբ գրվում է լեզվի քերականություն տրամադրության տակ, որը որոշում է բառերի փոփոխման կանոնները, բառերի նախադասություն մեջ միացման կանոնները, և այդպիսով լեզվին տալիս է կուտ, իմաստավորված բնույթ: Քերականությունը (ձևաբանությունը, շարահյուսությունը) բառերի փոփոխության և նախադասության մեջ բառերի կապակցության կանոնների ժողովածուն է, — շարունակում է բնկեր Ստալինը — Հեռավոր, հենց քերականության շնորհիվ է լեզուն հնարավորություն ստանում մարդկային մտքերը պարզերելու լեզվական նյութական թաղանթով²:

Քերականությունը, որի շնորհիվ լեզուն հնարավորություն է ստանում մարդկային մտքերը պարզերելու լեզվական նյութական թաղանթով, ընդգրկում է ձևաբանությունն ու շարահյուսությունը, որպես քերականության երկու հիմնական բաժիններ. սրանցից յուրաքանչյուրը լեզվի ուսումնասիրության մեջ ունի իր ուրույն բնագավառը: Այսպես, օրինակ, ձևաբանությունն ուսումնասիրում է բառերի փոփոխման կանոնները, բառերի կառուցվածքը, բառերի բաղադրությունները, բառածանցումներն ու բառարարությունները և նրանց քերականական փոփոխությունները, ձևաբանական կառուցողիաները (օր.՝ անվանական թիվ, հոլով, հոլովում... խոնարհում, եղանակ, ժամանակ, գեմք, թիվ, սեռ... և այլն):

Պարզ է, որ ձևաբանությունը հիշյալ կատեգորիաները վերցնում է քերականական ձևի և բովանդակության հաշվառման տեսակետից, ուստի ձևաբանական կատեգորիաները որոշելիս պետք է հիմք բնդունենք ոչ միայն քերականական ձևը, այլև պետք է հաշվի առնենք նրա նշանակությունը՝ բովանդակությունը:

Քերականական ձևը երբեմն որոշակի չի լինում, երբ այն վերցվում է առանձին՝ նախադասությունից կտրված: Վերցնենք, օրինակ, աշակերտի բառաձևը. սա առանձին վերցրած, նախ և առաջ, սեռական է (օր.՝ ժես ստուգեցի աշակերտի տետրը), բայց այս նույն ձևը կարող է լինել նաև տրական և հայցական՝ անորոշ առումով (օր.՝ ժես հանդիպեցի մի աշակերտի և ժես գովեցի մի աշակերտի): Այստեղ՝ երեք նախադասություններ

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 52:

² Նույն տեղում, էջ 52—53:

րի մեջ աշակերտի բառաձեր, անշուշտ, միևնույն հոլովաձեր կհամարելինք, եթե մենք հիմք բնդունելինք միայն քերականական ձեր:

Նման սխալ եզրակացությունների կհանգենք, եթե անսեփական քերականական ձեր և քերագնահատենք նրա խմաստը (բովանդակությունը), այն ժամանակ հայերենում կարելի էր «գտնել» տասնյակ հոլովներ, քանի որ կապերի միջոցով, չհաշված հոլովների արտահայտած երկրորդական տարրեր անունները, արտահայտվում են բազմաթիվ հոլովական հարարերություններ: Քերականական յուրաքանչյուր կատեգորիա, յուրաքանչյուր հատկացություն՝ կարելի է ստուգել, ճշտել, բնդհանրացնել ու արստրահել քերականություն կրող հիմնական և ուրույն բաժինների՝ ձևաքանություն ու շարահյուսություն հաշվառումով և նրանց տրամադրություն տակ դնելով լեզվի բառային կազմը:

Այսպիսով, բառային կազմը, որ խնդրին մերցրած, խնչպես ընկեր Ստալինն է ասում, գեռես լեզու չի կազմում և այն ավելի շուտ շինանյութ է հանդիսանում լեզվի համար, և քերականությունը, որ տալիս է բառերի փոփոխման կանոնները (ճեղատի ունենալով ոչ թե կոնկրետ բառերը, այլ բնդհանրապես բառերը, առանց որևէ կոնկրետություն) և նախադասություններ կազմելու կանոնները (ճեղատի ունենալով ոչ թե խնչ-որ կոնկրետ նախադասություններ, ասենք՝ կոնկրետ ենթակա, կոնկրետ ստորոգյալ և այլն, այլ բնդհանրապես ամեն տեսակ նախադասություններ, անկախ այս կամ այն նախադասության կոնկրետ ձևից), մերցրած իրար հետ միասին, փոխգործակցության մեջ, կազմում են լեզու:

Չհայած նրան, որ լեզվի բառային կազմի մեջ գլխավորը բառային հիմնական ֆոնդն է, որի մեջ մտնում են նաև բոլոր արմատական բառերը, որպես նրա միջուկը, բայց լեզվի վիճակի պատկերն արտացոլողը, անշուշտ, բառային կազմն է. «... խնչպես շինարարական գործում շինանյութերը չեն կազմում շենքը, թեև առանց դրանց անհնարին է շենք կառուցել, — գրում է բնկեր Ստալինը, — այնպես էլ լեզվի բառային կազմը չի կազմում բուն լեզուն, թեև առանց դրան աներևակայելի է որևէ լեզու»¹ Լեզվի բառային կազմը, սակայն, մեծագույն նշանակություն է ստանում, երբ այն գրվում է լեզվի քերականության տրամադրության տակ:

Մասնավորից և կոնկրետից արստրահվելով՝ քերականությունը խնչպես քառերի, այնպես էլ նախադասությունների մեջ վերցնում է այն բնդհանուրը, որ կազմում է բառերի փոփոխությունների և նախադասությունների մեջ՝ բառերի գուգակցման հիմքը և դրանից ելնելով կառուցում է քերականական կանոններ և օրենքներ: Քերականությունը, — գրում է բնկեր Ստալինը, — մարդկային մտածողության երկարատև, արստրահող աշխատանքի արդյունք է, մտածողության վիժիարի հաջողությունների ցուցանիշը²:

Այս տեսակետից բնկեր Ստալինը քերականությունը նմանեցնում է երկրաչափությանը, որը, — նրա խոսքերով ասած, — տալիս է իր օրենքները արստրահվելով կոնկրետ առարկաներից, առարկաները դիտելով որպես կոնկրետությունից զուրկ մարմիններ և նրանց հարարերությունները որոշելով ոչ թե որպես խնչ-որ կոնկրետ առարկաների կոնկրետ հարարերու-

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանություն հարցերը», էջ 32:

² Նույն տեղում, էջ 34:

թյուններ, այլ որպես ամեն մի կոնկրետությունից զուրկ մարմինների հարաբերություններ ընդհանրապես:

Այդ արստրահման արդյունքն են գոյական անունների ոչ թե կոնկրետ, օրինակ, դաշտ, սար, ձոր, ծառ, անտառ, գիրք, սեղան, մարդ... հասկացությունները, ինչպես գրանք գոյություն ունեն ընդհանրապես մեջ, այլ ընդհանուր, կամ ընդհանրապես վերցրած (իսկ ընդհանրապես մեջ չկա դաշտ ընդհանրապես, սար ընդհանրապես... և այլն): Այդ արստրահման հետևանքով ոչ միայն կոնկրետ, շոշափելի առարկաներն են ընդհանրացվում, ինչպես օր.՝ դաշտ, սար, ձոր, ծառ, անտառ, գիրք, սեղան, մարդ..., այլև այնպիսի հասկացություններ, որոնք մեր կողմից են մտածվում որպես առարկա, ինչպես օր.՝ հերոսություն, արիություն, բռնիք, հուզում... և այլն: Այստեղ՝ հերոսությունը բառի մեջ առարկայացված է հերոս հատկանիշը, արիությունը բառի մեջ՝ արի հատկանիշը, բռնիք բառի մեջ՝ բռնելու և հուզում բառի մեջ՝ հուզելու գործողությունները: Սրանք իրենց առանձին նշանակությունն արտահայտող տարրեր բառեր են, բայց փերականորեն նույնն են, բոլորն էլ գոյական անուններ: Միևնույն արմատից կազմված՝ բռնիք և բռնել կամ հուզում և հուզել բառերը, սակայն, փերականորեն տարրեր կատեգորիաներ են. բռնիք և հուզում առարկայացված անուններ են՝ կազմված գոյականացնող -ք և -ում (հին՝ -ումն) ածանցներով և հոլովվում են, իսկ բռնել և հուզել՝ բայեր են, որոնք գրեթե բառեր են գործողությունների գաղափարը (առանց առարկայացման) և խոնարհվում են: Սրանք բոլոր իրենց արտահայտած փերականական տարրեր հատկանիշների՝ պատկանում են համապատասխան խոսքի մասերի տակ:

Բառերի փոփոխությունները, օրինակ, հոլովումն ու խոնարհումը, կոնկրետ գրեթե բառերում են տարրեր նախադասությունների մեջ, իսկ նախադասությունից դուրս բառերի այդ փոփոխությունները ուսումնասիրելով՝ փերականությունը տալիս է նրանց փոփոխման և նախադասության մեջ նրանց միացման կանոնները, այն է՝ բառահարաբերություններն ու բառաթեքումները (հոլովումն ու խոնարհումը), բառակազմումները (բառածանցումներն ու բառաթեքումները), բառերի շարադասումները նախադասության մեջ և գրանց օրենքները, և այլն, և այլն:

Դարերի ընթացքում խոր տարրերություն է առաջ եկել հայոց հին գրական լեզվի՝ գրաբարի, որ անշուշտ հայ ժողովրդի ընդհանուր խոսակցական լեզու է հանդիսացել, և հայ ժողովրդի բանավոր խոսակցական կամ աշխարհարար լեզվի միջև: Բայց մեր արդի աշխարհարար գրական հայերենը, որ հայ ժողովրդի խոսակցական լեզվի շարունակությունն է, ինչպես վերևում տեսանք մի շարք օրինակներով, շատ ու շատ հանգաման կետեր ունի գրաբարի հետ:

Այդ հանգաման կետերն այն ընդհանրություններն են, որ մեր աշխարհարարն ունի գրաբարի հետ բառային կազմի (ներառյալ և՛ բառային հիմնական ֆոնդի) և փերականական կառուցվածքի տեսակետից, չնայած արդեն նրանց միջև եղած այն զգալի երբեմն անճանաչելի տարրերությունները, որոնք արդյուք են, մի կողմից, հայոց լեզվի զարգացման ներքին օրենքների օրինաչափությունների և, մյուս կողմից, սոցիալ-քաղաքական և պատմա-հասարակական յուրահատուկ պայմանների, որոնց մեջ

ապրել է հայ ժողովուրդը: Այդ է պատճառը, որ հայոց հին գրավոր լեզուն միջին դարերում արդեն անհասկանալի էր դարձել հայ ժողովրդին:

Ինչպես յուրաքանչյուր լեզու, հայոց լեզուն էլ ունեցել է իր զարգացման ներքին օրենքները, որոնք տարբեր են մյուս լեզուների զարգացման ներքին օրենքներից: Զարգացման ներքին այդ օրենքների անտեսումն է պատճառը, որ հնդեւրոպարանները (օր.՝ Մեյե, Կարստ և ուրիշներ) ընդունում են, թե հայերենը լրիվ կազմավորված և լիակատար վիճակում գրային (Նիւպոպայից) եկավ, որպես Վարիական հաղթողներու բարձր ու արքունի լեզուն¹: Եվ ճշմարտացի լեզվին հետ շփվելով և խառնվելով... ձայնական տեսակետն՝ նախնարար մաքուր հնդիկ-գերմ. լեզուն՝ ամբողջապես կավիասյան գրող առավ, բառագիտական տեսակետն՝ կավիասյան նախալեզվին բառամթերքին հետ խառնվեցավ և... ձևագիտական տեսակետն ալ արիական-հայկական լեզուն չկրցավ ինքը զինքը տեղական լեզվին բոլորովին մաքուր պահել...² և Վիտրապես տարբերվեց հնդեւրոպականից (Մեյե), թեև, ինչպես կարծում են ըստ Վեզվայ պատմության նկատառման, «... նվազ քաղաքակիրթ ազգերը մտավորապես բարձրագույն ազգի մը լեզուն ամբողջապես կամ քստ մասնն կառնուն, սակայն երբեք հակառակը չի հանդիպիր»:

Գարստը միաժամանակ ընդունում է, իր խոսքերով ասած, Վայերեն լեզվին կավիասյան գրային լեզվարունին ճշուդերուն հետ ունեցած ազգակցությունը (ն. տեղ): Նրա ասելով՝ Վայս հարարերությունը երևան կելլե՝ 1. իրավամբ կավիասյան ըսված ձայնական հատուկ գրության մեջ, որ երկու լեզուներուն ալ հասարակաց հիմը կկազմե, 2. հասարակաց ճոխ բառամթերքին մեջ, 3. ձևագիտական կողմանե՝ ի մասնավորի հոգնակիի կազմության մեջ (նույն տեղում):

Հնդեւրոպարանության մյուս հայտնի ներկայացուցիչ Մեյեն նմանապես հաստատարար ընդունում է, որ, նախ, «... հայերենի հնչյունական սխեմանը հիմնականում զարմանալի նմանություն ունի կովիասյան լեզուների հնչյունական սխեմաներին և ապա՝ դժբախտություն է համարում, որ «... մինչև այժմ չի հաջողվել որոշել հայերեն լեզվի մեջ եղած բառերի այն ստվար մասը, որոնց ծագումը անձանաչելի է, գրանք, — շարունակում է նա, — առաջացած կլինեն տեղական լեզուներից (ներածություն, § 2)³, իսկ հիշյալ աշխատության վերջում, կերակայության մեջ, ուղղակի ասում է՝ «... հայերենի հնչյունական և ձևարանական սխեմանը խորապես տարբեր է հնդեւրոպականից»:

Պարզ է, որ հայերենը, որպես բազմաթիվ խաչավորումների ժամանակ հաղթող գուրս եկող լեզու, իր քերականական կառուցվածքով և բառային իր հիմնական ֆոնդով խորապես տարբեր լինելով հնդեւրոպականից, զարգացել է ու շարունակում է զարգանալ իր զարգացման ներքին օրենքներով: Ուստի նրա բառային կազմի, այսպես ասած, ժառանգումով անձանաչելի ալն ստվար մասը, որը մեծ մասամբ մտնում է հայոց լեզվի բա-

¹ Տե՛ս՝ դժ. Թ. Բ. Կարստ, Հայերենի -եր, -եր, -ուի, -սի, հոգնակները, «Հանդես Ամսօրյա», 1903 թ. հունվար, էջ 10-11:

² Նույն տեղում:

³ A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1903 (1930 թ. II հրատարակ.):

ռային հիմնական ֆոնդի մեջ, և միաժամանակ ճնշվածության խորապես տարրեր ձևագրողական կամ թվարանական սխալներ, որ մտնում է արդեն հայոց լեզվի քերականական կառուցվածքի մեջ, ինչպես Մեյեն և նմաններն են կարծում, չի կարելի բացատրել լեզվի նախնի ընկերների լեզվական հակումների խոշոր գրեթե ամբողջական հայերենի գրություն մեջ և ոչ էլ թառաջացած համարել տեղական լեզուներից, այլ պետք է բացատրել հիմնականում հայոց լեզվի զարգացման ներքին օրենքներով:

Բսկ հնդեվրոպականների մոտ ոչ միայն անտեսվում են հայոց լեզվի զարգացման ներքին օրենքները, այլև հաշվի չեն առնվում նրա ձևավորման ու զարգացման ժամանակն ու տեղը, նրա նախնական վիճակը, որ սկզբնապես երբեք լրիվ ու կատարյալ (թարած ու արքունի լեզու) չէր կարող լինել, քանի որ հայերենը, ինչպես յուրաքանչյուր լեզու, որի տարրերը սահմանափակվելով գեոևս խոր հնագործում, եղել է ոչ-ըարկ լեզու՝ բառային շատ աղքատիկ ֆոնդով և քերականական պրիմիտիվ կառուցվածքով: Բայց արտագրության հետագա զարգացման, գասակարգերի երևան գալու, գրություն ստեղծման, պետություն ծագման, առևտրի զարգացման և այլնի հետևանքով մեծ փոփոխություններ առաջ եկան հայոց լեզվի զարգացման մեջ: Պարզ է, որ հայոց լեզվի հետ, նրա զարգացման ընթացքում, անշուշտ, խաչավորվել են մի շարք լեզուներ¹, և նման դեպքերում նա հաղթող դուրս գալով՝ համալրել է իր բառային կազմը ի հաշիվ այդ պարտիվ լեզուների բառային կազմի: Երանով հայոց լեզուն ոչ թե թուլացել է, թաղավաղվել կամ թաղճատվել, ինչպես կարծում են ոմանք, այլ, ընդհակառակը, հարստացել է և ուժեղացել. պահպանելով իր քերականական կառուցվածքը և հիմնական բառային ֆոնդը՝ շարունակել է առաջ ընթանալ ու կատարելագործվել իր զարգացման ներքին օրենքներով:

Հայոց լեզուն զարգացման ու կատարելագործման իր աննախընթաց վերելքն ապրեց մանավանդ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ուժերի հետո, երբ Սովետական Միության մեջ արդեն ոչ միայն գիր ու գրականություն ունեցող ազգություններին, ինչպես նաև հայ ժողովուրդն էր, այլև ոչնչացման ճանապարհին կանգնած բազմաթիվ մանր ազգություններին վերագարծվեց իրենց ապրելու իրավունքը, ստեղծվեց նրանց համար գրական լեզուներ: Այդպիսով, նրանք ոչ միայն ազատվեցին ոչընչացումից, այլև ստեղծվեց նրանց համար զարգացման ու բարգաժանման լայն հնարավորություններ՝ ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական իրենց կուլտուրաները զարգացնելու ու ծավալելու տեսակետից:

¹ Ն. Մ ա ո ճ էլ ընկնում էր մյուս ծայրահեղություն մեջ և հանգում էր սխալ ոչ մարքսիստական հորակացությունների, երբ նա հիմնադրեց, այսպես ասած, լեզվի նոր ուսմունքը: Նա զարգացնում էր այն միտքը, թե պատմության մեջ տեղի ունեցած լեզուների խաչավորման բաղաժիթիվ փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ խաչավորման ժամանակ նոր լեզու է գոյանում պայթյունի միջոցով, հին որակից հանկարծակի նորակի անցնելու միջոցով: Դա բոլորովին ճիշտ չէ: